ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 փետրվարի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

18
(2868)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԵՏ ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ԳՈՐԾՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾԸ

Արթուր Հովհաննիսյանի հետ թմրանյութի գործով ձերբակալված անձի գործերը լավ չեն. նա պարտքեր է կուտակել: «Ժողովուրդ» օրաթերթն արդեն տեղեկացրել էր, որ ԱԺ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը 2017 թվականի նոյեմբերի 28-ին Nissan March մակնիշի ավտոմեքենայով Երեւանի բնակիչ Գեւորգ Սավթալյանի հետ բերման էր ենթարկվել ոստիկանություն: Նրանց մոտից խուզարկությամբ հայտնաբերվել էր 0.24 գրամ կշռով դեղնականաչավուն զանգված: Ոստիկանները հենց թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված ենթադրյալ հանցանք կատարելու կասկածանքով էին Արթուր Հովհաննիսյանին եւ Գեւորգ Սավթալյանին ոստիկանություն տարել: Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ «Դատալեքս» տեղեկատվական համակարգից, ՀՀ օմբուդսմենի ընդդիմադիր թեկնածու Էդգար Ղազարյանի ականջն ու լեզուն կտրելու սպառնալիք հնչեցնող պատգամավոր Արթուր Հովհաննիսյանի հետ ձերբակալված Գեւորգ Սավթալյանից տարատեսակ կազմակերպություններ դատարանի միջոցով գումար են պահանջում: «Ամերիաբանկ»-ը, «Մոգո»-ն, «Գուդկրեդիտ»-ը, Հերացու անվան բժշկական համալսարանը ՔՊ խմբակցության քարտուղարի հետ ձերբակալված անձից դատարանի միջոցով պահանջում են 15-ից 63 հազար ՀՀ դրամ: Դատելով Գեւորգ Սավթալյանի ֆեյսբուքյան էջից՝ Արթուր Հովհաննիսյանը նրա միակ եւ անփոխարինելի ընկերն է, որը, սակայն, նեղության մեջ գտնվող ընկերոջը թողել է անօգնական:



ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը Պաշտպանության նախարարության գործառույթներն իրեն է վերապահել ու շտապում է ՊՆ-ից առաջ պաշտոնական տեղեկություններ հաղորդել: Այսպիսով, երեկ Սյունիքի մարզի Ներքին Հանդ գյուղում տեղի ունեցած սահմանային միջադեպի ընթացքում ՊՆ-ն առավոտից պարբերաբար պաշտոնական հաղորդագրությամբ էր հանդես գալիս՝ կոչ անելով հետեւել միայն պաշտոնական լրահոսին: Եւ, ահա, Անդրանիկ Քոչարյանը, առաջ ընկնելով պաշտպանական գերատեսչությունից, խախտելով ՊՆ սահմանած կարգը, հայտարարեց, որ հայկական կողմի զոհերի թիվը հասել է 4-ի: Շեշտենք, որ սահմանային միջադեպերի մասին պաշտոնական տեղեկություն հաղորդելու լիազորություն ունի բացառապես ՊՆ-ն. դա պատգամավորի կամ այլ բարձրաստիճան պաշտոնյաների գործառույթների մեջ չի մտնում: Ավելին՝ երբ սահմանային միջադեպից հետո տվյալ համայնքի ղեկավարը լրատվամիջոցների հետ զրույցում մանրամասներ է ներկայացնում տիրող իրավիճակից, իշխանություններն անմիջապես աղմուկ են բարձրացնում, որ մարզպետն իրավասու չէ սահմանային իրավիճակի մասին տեղեկություն տալ: Փաստացի երեկ ՔՊ-ական Անդրանիկ Քոչարյանը փորձեց մրցակցության մեջ մտնել ՊՆ-ի հետ ու առաջինը տեղեկություն տալ զոհերի մասին: ՔՊ-ական պատգամավորը, որը նաեւ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն է, չարաշահելով իր դիրքը, ՊՆ-ի փոխարեն, ինքն է առաջինը զոհերի թիվը հայտնում: «Ժողովուրդ» օրաթերթն այս խայտառակ փաստի առնչությամբ դիմեց ՊՆ՝ պարզելու, թե ինչպես են վերաբերվում, որ իշխանական պատգամավորը, իրենց փոխարեն, առաջինն է պաշտոնական տեղեկություն տալիս, սակայն ՊՆ խոսնակ Արամ Թորոսյանը հրաժարվեց մեկնաբանել:

Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամները կշարունակեն համատեղել ավագանու անդամի եւ հանրային ծառայողի պաշտոնները: Իշխանությունները հնարամիտ տարբերակ են մտածել յուրայիններին չնեղացնելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու մի շարք անդամներ ավագանու անդամի պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոններ են զբաղեցնում: Այսպես, ավագանու իշխանական անդամ Վլադիմիր Կիրակոսյանը համատեղությամբ նաեւ Անտառային կոմիտեի նախագահն է, Նատալյա Սինորյանը ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի օգնականն էր, իսկ հիմա՝ ՔՊ խմբակցության փորձագետը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին ղեկավար, ավագանու անդամ Արման Բարխուդարյանը ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանի խորհրդականն է, Ջինա Չալիկյանը ԱԺ նախագահի ռեֆերենտն է, իսկ Լեւոն Լեւոնյանը նաեւ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականն է: Հայաստանի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից մինչեւ փետրվարի 15-ը ժամանակ էին տվել իշխանական ավագանու անդամներին. նրանք կամ ավագանու մանդատից պետք է հրաժարվեն, կամ իրենց զբաղեցրած հանրային պաշտոններից: Երեկ հայտնի դարձավ, որ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստ: Օրակարգում ընդգրկված է եղել ավագանու անդամի կողմից այլ հանրային պաշտոն զբաղեցնելու սահմանափակումների վերաբերյալ հարցը: Այսպիսով, խորհուրդը որոշել է հետեւյալը. այս պահին այն ավագանու անդամներին, որոնք անհամատեղելիության իրավիճակում են հայտնվել, համաներում է տրվում: Այսպիսով, ավագանու ՔՊ-ական այս 4 անդամների նկատմամբ (Հակակոռուպցիոն կոմիտեն գտել էր, որ նրանք խնդիր ունեն պաշտոնի համատեղելիության) համաներում կկիրառվի: Խորհրդի անդամները գտել են, որ տարընթերցումներ կան համապատասխան օրենքներում, իսկ պաշտոնների անհամատեղելիության սահմանափակումները հստակեցված չեն:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



ՀՀ վարչապետի աշխատակազմը 2024 թվականի հունվարի 25-ին 1 մլն 411 հազար 200 դրամ (ներառյալ Ավելացված արժեքի հարկը) արժողությամբ պայմանագիր է կնքել «Եգեր» ՍՊԸ-ի հետ, որը զենքի եւ զինամթերքի, զինվորական եւ որսորդական պարագաների խանութների ցանց է: Վարչապետի աշխատակազմը գնել է Баúкаλ MP-71 14 ատրճանակներ: Ատրճանակի մեկ հատի արժեքը կազմել է 100 հազար 800 դրամ: Պայմանագրով գնման առարկան՝ ատրճանակը, տեխնիկական բնութագով պողպատից է, զենքի տրամաչափը՝ 9x17 մմ, փամփշտատուփի պարունակությունը՝ 8 փամփուշտ, զենքի ընդհանուր երկարությունը՝ 94 մմ, քաշը՝ 0.73 կգ: Ատրճանակները ձեռք են բերված 2 տարի երաշխիքով: Թե ինչ նպատակով, փաստաթղթերում չի երեւում:

ԶՐՈՒՅՑ

«ՄԱՐԴԻԿ ՈՒԶՈՒՄ ԵՆ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԵԼ»

ArmLur.am-ի հետ զրույցում Երեւանի փոխքաղաքապետ, ՔՊ վարչության անդամ Արմեն Փամբուխչյանն անդրադարձել է շրջանառվող այն տեղեկություններին, որ ՔՊ-ականների եւ Աժ նախագահ Ալեն Սիմոնյանի հարաբերությունները վերջին իրադարձություններից հետո լարվել են: Փամբուխչյանն անդրադարձել է նաեւ իրավապահների գործողություններին:

-Պարոն Փամբուխչյան, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի շուրջ տեղի ունեցող իրադարձություններից հետո խոսակցություններ կան, որ «Քաղաքացիական պայմանագրում» նրա եւ թիմակիցների հարաբերությունները բավականին լարված են, ու նա անգամ վարչության վերջին նիստին չի մասնակցել: Դուք ՔՊ-ի վարչության անդամ եք, ի՞նչ կասեք այս մասին, ի՞նչ տարաձայնություններ կան, ու պատճառը ո՞րն էր, որ ներկա չէր վարչության նիստին: Արդյոք դրանով նա իր վերաբերմո՞ւնքն էր արտահայտում:

-Պարբերաբար վարչության շատ անդամներ չեն մասնակցում վարչության նիստին , այդ թվում՝ ես էլ այդ օրը չեմ մասնակցել վարչության նիստին, որին որ պարոն Սիմոնյանը չի մասնակցել, այսինքն՝ սրանից ենթադրություններ անելը համարում եմ անտեղի, թեեւ մարդիկ ուզում են ենթադրություններ անել, բայց, այնուամենայնիվ, հիշեցնեմ, որ էլի բացակա մարդիկ են եղել:

-Տարաձայնություններ եղե՞լ են արդյոք:

-Չկա նման բան, տարաձայնություններ չկան, քաղաքական օրակարգը այլ հարթության մեջ է, մնացած հարցերը այլ հարթության մեջ են, եւ որեւէ տարաձայնություն չկա:

-Պարոն Փամբուխչյան, Դուք՝ որպես քաղաքային իշխանության ներկայացուցիչ, իրավապահների գործողությունները ինչպե՞ս եք գնահատում:

-Իրավապահները ներկա ժամանակահատվածում բավականին արդյունավետ են աշխատում. բնականաբար թե՛ իրավապահները, թե՛ մնացած բոլոր կառույցներում կան որոշակի թերացումներ, ինչի ուղղությամբ տարվում է քաղաքականություն, եւ նաեւ դրա մասին պարբերաբար վարչապետն է խոսում: Ուզում եմ նշել, որ ներկա պահին իրավապահ համակարգը աշխատում է մաքսիմալ արդյունավետ:

-Պարոն Փամբուխչյան, նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները միջնորդություն են ներկայացրել կալանավորված երեք անձանց ազատ արձակելու համար, բայց դատախազը նրանց դիմումը չընդունեց եւ սեփական միջնորդությամբ որոշում կայացրեց ազատ արձակել: Այս մասին ի՞նչ կասեք:

-Հենց սա էլ խոսում է այն մասին, որ այդ առանձնացվածությունը կա օրենսդիր իշխանության, դատական եւ գործադիր իշխանությունների, եւ ժողովրդավարական երկրում նմանատիպ իրավիճակներ շատ կարող են լինել, որտեղ պետք չէ փնտրել այլ ենթատեքստ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԵՐՔԵԼ Է

ՕԳՏՎՈՒՄ ԵՆ ԱՆՀԱՐԿԻ ԱՌԻԹԻՑ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Մարգսյանը հերքել է շրջանառվող խոսակցություններն այն մասին, թե Վարդենիսում հանրային կենսական նշանակության կառույցները լուծարվում կամ տեղափոխվում են՝ համայնքը իր բնակչությունից դատարկելու դիտավորությամբ: Մարզպետն այս մասին խոսել է մարզպետարանում կայացած խորհրդակցության ժամանակ՝ անդրադառնալով Վարդենիս համայնքում իրականացված քաղաքական ակցիային եւ անհամաձայնություն հայտնելով ակցիայի կազմակերպիչների ոչ իրավաչափ գործողություններին:

«Քաղաքական ակցիան հետեւանք է մարդկանց մեջ տարածված այն կեղծ տեղեկությունների, թե իբրեւ Վարդենիսում հանրային կենսական նշանակության կառույցները լուծարվում կամ տեղափոխվում են՝ համայնքն իր բնակչությունից դատարկելու դիտավորությամբ: Նման սադրիչ լուրեր տարածողները մոռանում են, թե կառավարությունը վերջին տարիներին խոշոր ծավալների ինչպիսի ներդրումներ է կատարում, ինչ կարեւոր ծրագրեր է իրականացնում կենսագործունեության ամենատարբեր ոլորտներում: Նրանք երբեք չեն ասում, որ նույն Վարդենիսում նախորդ տարվա ընթացքում միլիարդավոր դրամների սուբվենցիոն ծրագրեր են իրականացվել, որոնք շարունակվելու են նաեւ այս տարի, երբեք չեն ասում, որ մոտակա տարիներին պետական միջոցներով կառուցվելու է նոր բժշկական կենտրոն, 1 դպրոցական, 5 կրթահամալիրների, նոր մանկապարտեզների շենքեր, հզորանալու են ենթակառուցվածքները: Փոխարենը որոշ անպատասխանատու մարդիկ օգտվում են անհարկի առիթից եւ խուճապ ու ապակայունություն ստեղծում շրջապատում: Իսկ այս ամենը գալիս է նրանից, որ մարդիկ հավուր պատշաճի իրազեկված չեն, ինչի համար հորդորում եմ բոլորիդ տալ բավարար տեղեկատվություն պետության կողմից իրականացվող կառուցողական քաղաքականության ու ծրագրերի մասին»,-խորհրդակցության մասնակիցներին դիմելով՝ ասել է մարզպետը:

Վերջին օրերին ակտիվորեն խոսակցություններ են շրջանառվում, թե Վարդենիսի հանրային նշանակության որոշ կառույցների լուծարումը կամ տեղափոխումը պայմանավորված է նրանով, որ նախատեսվում է դատարկել համայնքի բնակչությունը: Ելնելով այդ լուրերից՝ այս օրերին Վարդենիսի բնակիչները բողոքի ակցիաներ են իրականացրել: Փետրվարի 12-ին մարզպետն անձամբ հանդիպել էր ակցիայի մասնակիցների հետ, ինչի արդյունքում մասնակիցները դադարեցրել էին այն: Փետրվարի 13-ին, սակայն, եւս մեկ ակցիա է անցկացվել:

Ավելի վաղ ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունը, անդրադառնալով Վարդենիսի անձնագրային բաժանմունքը փակելու խոսակցություններին, հայտնել էր, որ կենսաչափական անձնագրերի եւ նույնականացման քարտերի նոր համակարգի ներդրման պետություն-մասնավոր համագործակցության ձեւաչափով իրականացվող ծրագրով նախատեսված է յուրաքանչյուր մարզում հիմնել մեկ անձնագրային ստորաբաժանում, որի շրջանակում նախաձեռնվել է ստորաբաժանումների օպտիմալացում՝ թիվը 63-ից հասցնելով 47-ի: Այս համատեքստում նախատեսվում է Գեղարքունիքի մարզի բոլոր անձնագրային ծառայությունները միացնել Մարտունի համայնքի անձնագրային ծառայությանը: Փոփոխությունների արդյունքում ծառայության անվանումը կլինի Միգրացիայի եւ քաղաքացիական ծառայության Մարտունու բաժին:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

4 ԶՈՀ Է ԵՎ 1 ՎԻՐԱՎՈՐ

«Հայկական կողմից ադրբեջանցի զինվորների ուղղությամբ կրակոցների արձակումը ցավալի էր, բայց Ադրբեջանն անհամաչափ է արձագանքել»,- Բրյուսելում ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի 5-րդ նիստից հետո ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ համատեղ ասուլիսում հայտարարել է ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգային քաղաքականության հարցերի բարձր հանձնակատար Ժոզեպ Բորելը՝ անդրադառնալով ադրբեջանական զինված ուժերի կողմից Սյունիքի մարզի Ներքին Հանդ գյուղի հայկական դիրքերի ուղղությամբ արձակված կրակոցներին, որոնց հետեւանքով հայկական կողմն ունի 4 զոհ է 1 վիրավոր:

Ըստ Բորելի՝ Ադրբեջանը անտեսել է Հայաստանի պաշտպանության նախարարության հայտարարությունն առ այն, որ նախօրեի միջադեպը լիովին կհետաքննվի:

«Սա կրկին փաստում է ուժերը հեռացնելու հրատապ անհրաժեշտությունը, ինչը տեւական ժամանակ խրախուսում է Եվրամիությունը: Հարկ եմ համարում վերահաստատել Եվրամիության լիակատար հանձնառությունն աջակցելու տեւական եւ կայուն խաղաղության հաստատմանը՝ հիմնված ինքնիշխանության ճանաչման եւ տարածքային ամբողջականության ու սահմանների անքակտելիության սկզբունքների վրա: Եվրամիության առաքելությունը Հայաստանում վերջերս համալրվել է. անձնակազմի թվաքանակն է ավելացել, այն շարունակելու է նպաստել հարաբերությունների կարգավորման ջանքերին աջակող միջավայրի ձեւավորմանը»,- հայտարարել է Բորելը:

ՎԵՐՋԻՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

«Այս մակարդակի անվտանգային խնդիրներ ունեցող երկրում, փոխարեն այդ հարցերով զբաղվեն, զբաղված են քաղբանտարկյալների նկատմամբ գործեր կարելով»,- փետրվարի 13-ին լրագրողների հետ զրույցում ասաց ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը՝ ցավակցելով զոհվածների հարազատներին:

«Քանի դեռ Փաշինյանը գոյություն ունի, քաղաքականապես անհնար է, որ մեր պետությունն անվտանգ ու խաղաղ ապրի»,-ասաց նա:

Հարցին, թե ինչու ընդդիմությունը գործնական քայլեր չի ձեռնարկում, Մամիջանյանը պատասխանեց, որ կոնկրետ ՀՀԿ-ի համար որեւէ բան չի փոխվել. իշխանափոխությունն ինչպես եղել է օրակարգի առաջին հարցը, այդպես էլ շարունակում է մնալ:

«Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր փորձից հետո հայրենասերներն ավելի թույլ են դառնում, իսկ փաշինյանենք՝ ավելի լկտի ու «համարձակ»՝ հայրենիքը հանձնելու տեսանկյունից, անհրաժեշտ է ընտրել այնպիսի մի պահ, որ այդ փողոցային պայքարի մեկնարկը լինի վերջին հաղթականը: Խնդրում եմ ասածս չընկալել, թե ես կասկածի տակ եմ դնում նախորդ պայքարի փուլերը, իրադարձությունները. դրանք նույնպես որոշակի ազդեցություն ունեցել են, որոշակի արդյունքների հասել են, բայց մեր բոլորի ընդհանուր նպատակին հասնել չենք կարողացել»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԴԵՊԻ ԻՐԱՆ

Նիկոլ Փաշինյանի փետրվարի 12-ի որոշման համաձայն՝ 2024 թվականի փետրվարի 13-15-ը Իրանի Իսլամական Հանրապետություն կգործուղվի պատվիրակություն Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողովի 18-րդ նիստին մասնակցելու նպատակով:

Պատվիրակության կազմում ընդգրկվել է նաեւ Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Արսեն Ավագյանը:

Պատվիրակության կազմում են վարչապետի աշխատակազմից փոխվարչապետ Միհր Գրիգորյանը, Արման Ղազարյանը եւ Անի Բաբայանը:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունից կմեկնեն Վահան Կոստանյանը, Հայկ Դարբինյանը եւ Արեգ Բագրատյանը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից՝ Լենա Նանուշյանը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունից՝ Նարեկ Տերյանը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունից՝ Հակոբ Վարդանյանը, Արմեն Սիմոնյանը, Քրիստինե Ղալեչյանը եւ Վիկտորյա Քեշիշյանը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեից՝ Ներսես Ջեյնալյանը, Հայաստանի Հանրապետության ՏԿԵՆ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից՝ Նարեկ Ջուլալյանը:

Պատվիրակության գործուղման գիշերավարձի հետ կապված ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին, սակայն պատվիրակություններից յուրաքանչյուրը մեկնում է սեփական գերատեսչության միջոցների հաշվին:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔԸ

«Ադրբեջանի կողմից լայնածավալ ագրեսիայի նախադրյալներ միշտ կան: Պայքարը կարող է սկսվել ցանկացած պահի, իշխանություններն ու հասարակությունը պետք է պատրաստ լինեն դրան»,- փետրվարի 13-ին լրագրողների հետ զրույցում ասաց «Հայաստան» դաշինքի խորհրդարանական խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը:

«2020 թվականից հետո մենք պետք է համախմբվեինք եւ բարձրացնեինք բանակի պատրաստվածության մակարդակը: Բնակչության զգալի մասը պատրաստ է պաշտպանել երկիրը, պարզապես պետք է կազմակերպել բոլոր գործընթացները: Համապատասխան լծակներն ու հնարավորություններն իշխանությունների ձեռքում են: Նախկինում անվտանգության ոլորտում մենք համագործակցել ենք Ռուսաստանի, ՀԱՊԿ այլ երկրների, Վրաստանի, Իրանի հետ, բայց դու ինքդ պետք է պաշտպանես քո սահմանները: Խաղաղության երաշխիքը մարտունակ բանակն է եւ հմուտ դիվանագիտությունը»,- նշեց պատգամավորը:

ՓԱԿՎԵԼՈՒ ԵՆ

«ՍՏԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՌԵԿՈՐԴՆԵՐ Է ՍԱՀՄԱՆՈՒՄ»

Աժ պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Նիկոլ Փաշինյանի իշխանությունը ստախոսության նոր ռեկորդներ է սահմանում: ՀՀ քաղաքացիներին խաբելով, սուտ պայքարի իմիտացիաներով իշխանության գալով՝ Նիկոլ Փաշինյանն ու իրեն շրջապատող կիսատառաճանաչները հիմա էլ վարդենիսցիներին են խաբում:

Երեկ բազմաթիվ քաղաքացիներ զայրացած փակել էին Վարդենիսի ավտոճանապարհը՝ դժգոհելով, որ պետական մարմինները հերթով փակվում են Վարդենիսում, եւ վերջինը անձնագրային ծառայությունն է:

Եւ մարզպետը, եւ՛ անձնագրային ծառայության պատասխանատուները, եւ՛ Նիկոլ Փաշինյանը քաղաքացիներին մոլորեցնող հայտարարություններ են անում այս օրերին, իսկ իրականությունը, ինչպես միշտ, այլ է:

Այս տարվա հունվարի 23-ին գրությունով պարզաբանում էի պահանջել ՀՀ ՆԳՆ Վահե Ղազարյանից, թե ինչու են փակվում Վարդենիսի եւ Ճամբարակի անձնագրային ծառայությունները համայնքներում, նաեւ ներկայացրել էի, թե ինչ վատ ազդեցություն է ունեցել այդ որոշումը հանրության շրջանում:

Օրերս ստացել եմ նախարարի գրավոր պարզաբանումը, որտեղ սեւով սպիտակի վրա գրված է, որ օպտիմալացվելու են անձնագրային ծառայությունները սահմանամերձ համայնքներից.

«...նախաձեռնվել է ստորաբաժանումների օպտիմալացում՝ թիվը 63-ից հասցնելով 47-ի. հաշվի են առնվել հետեւյալ գործոնները՝

- տարածքային ստորաբաժանումների բաշխվածությունը, աշխարհագրությունը, սպասարկման ծածկույթը՝ ըստ բնակչության թվի,
- քաղաքացիական ծառայության պահանջը, ըստ որի՝ 4 եւ ավելի աշխատակիցների քանակ է պահանջվում ստորաբաժանման ձեւավորման համար, մինչդեռ մարզերում առկա էին 2-3 հոգուց բաղկացած խմբեր:

Գործընթացը կիրականացվի ընթացիկ տարում փուլային եղանակով: Այն համայնքներում, որտեղ նախատեսված է օպտիմալացում, զուգահեռաբար մշտադիտարկում կարվի: Անհրաժեշտության դեպքում շրջիկ ծառայության միջոցով պարբերաբար ծառայություններ կմատուցվեն Հայաստանի տարբեր համայնքներում»:

Պարզ գրված է, որ անձնագրայինը փակվելու է, քանի որ Վարդենիսի անձնագրային ծառայությունում 3 աշխատակից էր աշխատում: Էլ ի՞նչ եք խաբում մարդկանց, բառախաղ անում, թե «օնլայն», «մեկ պատուհան» եւ այլն: Անձնագրային ծառայությունները փակվելու են եւ՛ Վարդենիսում, եւ՛ Ճամբարակում:

Սա՛ է իրականությունը.

կից ներկայացնում եմ պաշտոնական պատասխանը»:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ»

Իտալիայում ՀՀ դեսպան Ծովինար Համբարձումյանին Բոնիֆացյան ակադեմիայի կողմից հանձնվել է հեղինակավոր Բոնիֆացիոս VIII - 2023 միջազգային մրցանակը, որը կրում է «Խաղաղության մշակույթի համար» խորագիրը:

Մրցանակի հանձնման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Անանի քաղաքի Պապական պալատում (քաղաքապետարանի շենքում):

Նույն միջոցառման շրջանակներում Բոնիֆացիոս VIII մրցանակը շնորհվել է նաեւ Սուրբ Աթոռի Մշակույթի քահանայապետական խորհրդի նախագահ կարդինալ Ջանֆրանկո Ռավազիին, Նախարարների խորհրդի (վարչապետի աշխատակազմի) գլխավոր քարտուղարի տեղակալ Մարկո Վիլանիին, Իտալիայում Լեհաստանի դեսպան Աննա Մարիա Անդերսին: Տարբեր տարիների Հռոմի պապ Բոնիֆացիո VIII-ի անունը կրող այս մրցանակը շնորհվել է տարբեր ականավոր քաղաքական, կրոնական, հասարակական գործիչների, այդ թվում՝ Եվրոպական խորհրդարանի նախկին նախագահներ Դավիդ Սասսոլիին, Անտոնիո Տայանիին եւ պարոն Եժի Բուզեկին, Կարդինալ Կոխին, Նոբելյան մրցանակակիր Ռիտա Լեվի Մոնտալչինիին, Իտալիայի վարչապետներ Ջուլիո Անդրեոտիին եւ Ռոմանո Պրոդիին, նախկին նախագահներ Օսկար Լուիջի Սկալֆարոյին եւ Կառլո Ազելիո Չամպիին, Պատգամավորների պալատի նախագահ Ռոբերտո Ֆիկոյին, պատգամավոր Ջանի Լետտային, Քաղաքացիական պաշտպանության գործակալության տնօրեն Գուիդո Բերտոլազոյին, տիեզերագնաց Ումբերտո Գուիդոնին, գեներալ Կլաուդիո Գրացիանոյին, ծովակալներ Գուիդո Վենտուրոնիին եւ Պաոլո Լա Ռոզային եւ այլոց:

Արարողությանը ներկա է եղել նաեւ Իտալիայի Գլխավոր զինվորական դատախազ Մաուրիցիո Բլոկը, կրոնական, քաղաքական եւ զինվորական բարձրաստիճան այրեր:

Մրցանակը դեսպան Համբարձումյանին հանձնել է Բոնիֆացյան ակադեմիայի ռեկտոր Սանտե Դե Անջելիսը: Պարգեւատրման արարողությանը նախորդել է Կարդինալ Ռավազիի՝ «Անհրաժեշտ հումանիզմը գիտության եւ նոր հաղորդակցության միջեւ» խորագրով դասախոսությունը, որին հաջորդել են պարգեւատրվածների ելույթները:

Դեսպան Համբարձումյանն իր ելույթում երախտիքի խոսք է հայտնել իրեն նման բարձր պարգեւի արժանացնելու համար, ներկայացրել իրավիճակը տարածաշրջանում, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի մարտահրավերները, Հայաստանի հանձնառությունը խաղաղության օրակարգին: Նա շեշտել է խաղաղության նշանակությունը ողջ Հարավային Կովկասի համար:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽԱԽՏԵԼ Է ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆԴՈՐԸ

«Միքայելյան» հիվանդանոցում խմբով խուլիգանություն կատարելու, բժշկի, աշխատակիցների նկատմամբ բռնություն գործադրելու համար մեղադրանքներ են ներկայացվել երկու անձի:

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում իրականացվող քննությամբ պարզվում են մի խումբ անձանց կողմից «Միքայելյան» վիրաբուժության ինստիտուտում խուլիգանություն կատարելու, բժշկի եւ անվտանգության աշխատակիցների նկատմամբ ֆիզիկական ներգործություն կատարելու դեպքի հանգամանքները:

2024 թվականի փետրվարի 7-ին հիշյալ հիվանդանոցից ահազանգ է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 21:15-ին, իրենց մոտ բուժօգնության տեղափոխված հիվանդի հարազատները հարձակվել են բուժանձնակազմի վրա, հարվածել վերջիններիս, հնչեցրել հայհոյանքներ: Ավելի ուշ հիվանդանոցից կրկին ահազանգ է ստացվել, որ հիշյալ միջադեպից հետո բուժօգնության են դիմել վիրաբուժական ինստիտուտի անվտանգության երկու ծառայող:

Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ նույն օրը, խուլիգանություն կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, հիվանդանոցի մոտից ձերբակալվել է 3 քաղաքացի:

Իրականացված նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով՝ նրանից մեկը՝ 28-ամյա երիտասարդը, 2024 թվականի փետրվարի 7-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, լինելով ալկոհոլի ազդեցության տակ, քրոջ ամուսնու եւ իր հասակակից մեկ այլ երիտասարդի հետ խմածության հետեւանքով անգիտակից վիճակում գտնվող հորեղբոր որդուն տեղափոխել է «Միքայելյան» վիրաբուժության ինստիտուտ:

Այնուհետեւ, երբ հիվանդանոցի անվտանգության աշխատակիցները բուժօգնության դիմած անձին ուղեկցել են վերակենդանացման բաժանմունք, 28-ամյա երիտասարդը, չհամակերպվելով նշված բաժանմունքում իր մուտքն արգելված լինելու հանգամանքի եւ այդ կապակցությամբ անվտանգության աշխատակիցների կողմից տրված պարզաբանումների հետ, դրսեւորել է խուլիգանական վարքագիծ:

Մասնավորապես, վերջինս նախ սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել անվտանգության աշխատակիցների ու բուժանձնակազմի հասցեին, ապա խմբի կազմում՝ քրոջ ամուսնու հետ, իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական եւ հասարակության նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով, շարունակել է նույն վարքագիծը նաեւ հիվանդանոցի մեկ այլ հատվածում:

Վերջինս, տեւական ժամանակ՝ շուրջ 10-15 րոպե անպարկեշտ արտահայտություններ հնչեցնելով, կոպիտ կերպով խախտել է ինչպես բուժանձնակազմի, այնպես էլ հիվանդների անդորրը, ապա, խուլիգանական դրդումներով, քրոջ ամուսնու հետ հարվածներ է հասցրել բժիշկներից մեկի, անվտանգության ծառայության երկու աշխատակիցների մարմնի տարբեր մասերին՝ նրանց պատճառելով մարմնական վնասվածքներ ու ֆիզիկական ցավ:

Ձեռք բերված բավարար փաստական տվյալների հիման վրա՝ միջնորդություն է ներկայացվել դատախազին՝ 28-ամյա քաղաքացու եւ նրա քրոջ ամուսնու նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը բավարարվել է:

Նրանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ եւ 9-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

28-ամյա երիտասարդի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, իսկ նրա քրոջ ամուսնու նկատմամբ՝ տնային կալանքը 2 ամիս ժամանակով:

Վերջիններիս հետ հիվանդանոց գնացած, ապա ձերբակալված 3-րդ անձն ազատ է արձակվել՝ արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը վերանալու հիմքով:

Նախաքննությունը շարունակվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐՈՆԻԿՈՆ

ՈՐԴԻՆ՝ ՀՈՐԸ

Փետրվարի 12-ին ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզի օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում էր ստացվել, որ փետրվարի 10-ին իր տանը հարազատների ներկայությամբ հանկարծամահ է եղել Ալավերդի քաղաքի բնակիչ 75-ամյա Սամվել Վարդումյանը:

Դեպքի հանգամանքները պարզելու ընթացքում Թումանյանի բաժնի համայնքային ոստիկաններին Լոռու մարզային դատաբժշկական փորձաքննությունների բաժնից հայտնել էին, որ նախնական զննությամբ դիակի վրա հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ, որոնք էլ մահվան պատճառ են եղել:

ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզային վարչության, Թումանյանի բաժնի, ինչպես նաեւ Թումանյանի քննչական բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Սամվել Վարդումյանին մարմնական վնասվածքներ պատճառել էր նույն հասցեում բնակվող 44-ամյա որդին: Նա հայտնաբերվել, ձերբակալվել ու տեղափոխվել է ոստիկանության Թումանյանի բաժին:

Դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումներով պարզվել է նաեւ, որ մինչ 75-ամյա հորը մահվան ելքով վնասվածքներ պատճառելը 44-ամյա տղամարդը ոչ սթափ եւ ագրեսիվ վիճակում վիճաբանել էր 75-ամյա մոր հետ, ձեռքերով բազմաթիվ հարվածներ էր հասցրել նրա գլխի շրջանում եւ աչքերի հատվածներում: 75-ամյա կինը հրավիրվել է Թումանյանի բաժին, հաստատել հիշյալ հանգամանքը, իսկ նրա ակնակապիճների հատվածներում ակնհայտորեն նկատվել են կապտուկներ:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Թումանյանի քննչական բաժին:

ՄԻՊ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ

Փետրվարի 13-ին Սյունիքի մարզի Ներքին Հանդի ուղղությամբ Ադրբեջանի զինված ուժերի գործողությունների հետեւանքով մարդու իրավունքների խախտումներին վերաբերելի հարցերի առնչությամբ ՄԻՊ Անահիտ Մանասյանի հանձնարարությամբ աշխատակազմում սկսվել է ուսումնասիրություն:

Ներքին Հանդի ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերի կրակի հետեւանքով խաթարվել են քաղաքացիական բնակչության կյանքի, անվտանգ միջավայրում ապրելու, կրթության եւ այլ հիմնարար իրավունքները:

ՄԻՊ աշխատակազմին բնակիչները պատմել են, որ կրակոցները պարզ լսելի են եղել, ինչի հետեւանքով իրենք ահաբեկվել են, հայտնվել են անորոշության մեջ, տագնապային վիճակում:

Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ Ադրբեջանի զինված ուժերի գործողություններն իրական վտանգ են ներկայացնում անձանց կյանքի իրավունքի եւ անվտանգության, կրթության, ինչպես նաեւ մյուս հիմնարար իրավունքների ապահովման տեսանկյունից:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշտադիտարկման եւ մարդու իրավունքներին առնչվող փաստերի հավաքագրման աշխատանքները շարունակվում են:

ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՍԵՐՄԵՐ

Փաստաբան Արա Զոհրաբյանը սոցցանցի իր էջում գրել է. «2024 թվականի փետրվարի 05-ին եւ 06-ին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում գրանցված «Andranik Dovlatyan» տվյալներով օգտատերը իրականացրել է ուղիղ եթերներ, որոնցով վերջինս Ն.Ս.Օ.Տ.Տ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի, այլ բարձրաստիճան հոգեւորականների եւ այլոց հասցեներին, ինչպես նաեւ Իրանի Գերագույն հոգեւոր առաջնորդ Այաթոլլա Խամենեիի հասցեին հնչեցրել է հայհոյանք եւ զրպարտություն պարունակող արտահայտություններ:

Նշված անձը կոչ է արել փետրվարի 24-ին հավաքվել Էջմիածին քաղաքում:

Անդրանիկ Դովլաթյանի վերը նշված արարքը հասարակության մեջ լուրջ դժգոհություն է առաջացրել, եւ բազմաթիվ քրիստոնյաներ հայտարարել են 2024թ. փետրվարի 24-ին Էջմիածին մեկնելու եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին պաշտպանելու մասին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Անդրանիկ Դովլաթյանի նշված արարքները պարունակում են առնվազն երկու հանցագործության հատկանիշներ, այսօր քսանից ավելի փաստաբաններով հանցագործության մասին հաղորդում ենք ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեին:

Հիշեցնեմ, որ խուլիգանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդված) հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելն է, որը դրսեւորվել է անձին ստորացնելով կամ հայհոյանքներով կամ անպարկեշտ արտահայտություններով կամ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ մարդկանց անդորրը խախտելով, իսկ եթե այդ արարքը կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով, ապա պատժվում է նաեւ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Մեր կարծիքով՝ նշված արարքները պետք է քննարկել նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի համատեքստում (ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը):

Ակնհայտ է, որ Իրանի Իսլամական Հանրապետության հոգեւոր առաջնորդի նկատմամբ հրապարակային լկտի զրպարտչական նյութը թշնամանք է առաջացնելու երկու ազգերի միջեւ:

Եթե իրավապահ համակարգը պատշաճ իրավական գնահատական չտա Անդրանիկ Դովլաթյանի եւ նրա գաղափարակիցների վարքագծին, ապա ատելության այս հողի վրա բախումներն անխուսափելի են լինելու:

Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրության 18-րդ հոդվածի ուժով ճանաչել է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում:

Հոգեւոր հայրերի նկատմամբ նման հանցավոր դրսեւորումները շատ վտանգավոր սերմեր են պարունակում եւ արյունահեղության մեծ ռիսկեր են պարունակում: Նաեւ հայ ժողովրդի կրոնական զգացմունքների դեմ ուղղված այս հանցավոր դրսեւորումը պետք է կանխվի օրինական ճանապարհով»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 12-ից 13-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 70 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓՈԽԱՆԱԿ ՕՊՏԻՄԱԼԱՑՆԵՆ

Մի քանի տարի առաջ սահմանամերձ Նոյեմբերյանում, Բերդում զինկոմիսարիատները, «սանէպիդկայանները» օպտիմալացրին, փակեցին Նոյեմբերյանի, Իջեւանի, Դիլիջանի պետռեգիստրի ստորաբաժանումները, պետռեգիստրի հետ կապված գործերով սահմանամերձ Նոյեմբերյանի, Բերդ համայնքների բնակիչները այժմ ստիպված են 70-100 կմ ճանապարհ կտրել, հասնել Իջեւան: Մինչդեռ, հարկ է օպտիմալացնել մարզպետարանները, որոնք, 80-100 հաստիք ունենալով, մարզերում կառավարության ֆունկցիաները կրկնում են: Մարզպետարանները ընդամենը 2 ոլորտ են կառավարում՝ մարզի հանրակրթական դպրոցները եւ բուժհիմնարկները, այն էլ՝ ԿԳՄՍ եւ առողջապահության նախարարությունների հետ համատեղ: Համայնքների խոշորացումից հետո ավելի հեշտ ու արդյունավետ է դարձել կառավարություն-համայնքներ կապը. էլ ի՞նչ կարիք կա այդ գործում միջնորդ մարզպետարանների: Մարզպետարանների տասնյակ պաշտոնյաներ զանազան ծրագրեր են կազմում, որոնց բացարձակ մեծամասնությունը մնում է թղթի վրա, չի իրականացվում: Այդ պաշտոնյաները, համեմատաբար բարձր ռոճիկից զատ, պետբյուջեից պարբերաբար պարգեւավճարներ են ստանում; 2023 թվականին Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները ավելի քան 71 միլիոն դրամ պարգեւավճար են ստացել: Հայաստանը արտերկրից նոր վարկեր է վերցնում, որ մարզպետարանների պաշտոնյաներին պարգեւավճարներ բաժանի:

ՉԻՆԱՐԻՆ ԱՋԱԿՑՈՒՄ Է

Համացանցում տարածված է արցախցի Մարիամ Օհանյանի 25-օրական երեխայի լուսանկարը, որը մայրիկի հետ այժմ Բերդ համայնքի սահմանամերձ Չինարի գյուղում է: Նշված է, որ փոքրիկը արհեստական կաթ է ուտում, մայրը չի աշխատում, օգնող չունի, չի կարողանում նորածնին ապահովել արհեստական կաթով: Համացանցում կոչ է արվում գումար նվիրաբերել նորածնի սննդի համար: Չինարի բնակավարի նախկին վարչական ղեկավար, այժմ Բերդի համայնքապետարանի առաջատար մասնագետ Սամվել Սաղոյանը հայտնեց, որ 18 տարեկանը չլրացած մայրը՝ Մարիամը, փետրվարի 10-ին է էջմիածնից տեղափոխվել Չինարի՝ այնտեղ հաստատված քեռու 10-հոգանոց ընտանիք: Սաղոյանը Մարիամին հորդորել է Բերդ համայնքում հաշվառվել, սակայն նրա տատի հիվանդանալու պատճառով Մարիամը հաշվառվել է փետրվարի 12-ին: Ս. Սաղոյանը Մարիամի համար Չինարիում առանձնատուն է ճարել, այնտեղ միացրել էլեկտրական հոսանքը: Մարիամի նորածինը սնվում է արհեստական կաթով, որը բավական թանկ է, սակայն Բերդ համայնքը, Չինարի գյուղը պատրաստակամ են աջակցել Բերձորից տեղահանված միայնակ կնոջը: Չինարիում հոգատար վերաբերմունք կա գյուղում հաստատված արցախցիների նկատմամբ, նրանց խնդիրները լուծելուն օգնում են նաեւ Մոսկվայում ապրող չինարեցիները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ՝ ԿՈՏԱՅՔ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը փետրվարի 12-ին աշխատանքային այց է կատարել Կոտայքի մարզի դատախազություն՝ ամփոփելու մարզի դատախազության կատարած աշխատանքները:

Քննարկմանը մասնակցել են Ազգային անվտանգության ծառայության, Քննչական կոմիտեի, Ներքին գործերի նախարարության ոստիկանության մարզային կառույցների ղեկավարները, մարզի դատախազության դատախազները:

Մարզի դատախազ Սեւակ Պողոսյանը ներկայացրել է 2023 թվականի ընթացքում Կոտայքի մարզի դատախազության կատարած աշխատանքները. զեկույցում ներառվել են տվյալներ՝ հանցավորության վիճակի, հանցագործությունների բացահայտման, նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության, դատարանում մեղադրանքի պաշտպանության, պետական շահերի պաշտպանության ոլորտում իրականացված աշխատանքներին վերաբերյալ:

Հանցավորության վիճակին անդրադառնալով՝ մարզի դատախազը նշել է, որ Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների համաձայն՝ 2023 թվականի ընթացքում Կոտայքի մարզում արձանագրվել է հանցագործությունների 3102 դեպք (2022 թվականին՝ 2519 դեպք): Հանցագործության դեպքերն աճել են 583-ով կամ 23,1%-ով. բացահայտման ցուցանիշը նվազել է՝ 29,2%՝ 2022 թվականի 47,1%-ի դիմաց:

Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է առանձնապես ծանր հանցանքների 42 դեպք (2022 թվականին՝ 29). դեպքերն աճել են 13-ով կամ 44,8%-ով, բացահայտման ցուցանիշը նվազել է՝ կազմելով 38,3%՝ 2022 թվականի 54,8%-ի դիմաց:

Անդրադառնալով սպանությունների, սպանության փորձերի եւ ավազակային հարձակումների դեպքերին՝ մարզի դատախազը հայտնել է, որ 2023 թվականին արձանագրվել է ավազակային հարձակման 9 դեպք՝ նախորդ տարվա 6-ի դիմաց, այսինքն՝ 3 դեպքով կամ 50 %-ով ավելի: Բացահայտման ցուցանիշը կազմել է 11,1%՝ 2022 թվականի 100%-ի դիմաց:

Սպանության (առանց հանկարծամահության) դեպքերը նվազել են 1-ով՝ կազմելով 8 (2022 թվականին՝ 9): Բացահայտման ցուցանիշը կազմել է 50%՝ 2022 թվականի 88,9%-ի դիմաց:

2023 թվականին նվազել են տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները. 2023 թվականին արձանագրվել է 63 դեպք (2022 թվականին՝ 92):

Նվազել են բնակարանային գողության դեպքերը. մասնավորապես՝ 2023 թվականին արձանագրվել է բնակարանային գողության 105 դեպք՝ 2022 թվականին արձանագրված 128-ի դիմաց:

Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներով հաշվետու ժամանակահատվածում նախաձեռնվել է 17 վարույթ (2022 թվականին՝ 13): Դեպքերը վերաբերում են կրթության, առողջապահության ոլորտներին եւ տեղական ինքնակառավարման մարմիններին. քրեական վարույթներով պատճառված վնասը կազմել է 17 մլն 883 հազար դրամ, որից վերականգնվել է 14 մլն 810 հազար դրամը:

2023 թվականի ընթացքում Կոտայքի մարզի դատախազության դատախազների կողմից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 803 վարույթ՝ 844 անձի վերաբերյալ (2022 թվականին՝ 237 վարույթ՝ 260 անձի վերաբերյալ):

2023 թվականի ընթացքում 40 անձի վերաբերյալ դատարաններում ավարտված 40 քրեական գործով կիրառվել է համաձայնեցման վարույթ:

Կոտայքի մարզի դատախազության կողմից պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում հարուցված հայցերով դատարանի վարույթում 2023 թվականին քննվել եւ քննվում են 13 հայցադիմումներ՝ 114 մլն 797 հազար դրամի եւ 33 հազար 145 ԱՄՆ դոլարի չափով հայցապահանջով:

Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը հանձնարարել է պետական (համայնքային) շահերի պաշտպանության ոլորտում ուշադրության կենտրոնում պահել մանկապարտեզների, ընդհանուր օգտագործման տարածքների, ջրավազանների, անտառային տարածքների եւ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով՝ օտարման ոչ ենթական տարածքների վերաբերյալ ուսումնասիրությունները:

Անդրադառնալով 8 ամսից ավելի տեւող վարույթներին՝ ՀՀ գլխավոր դատախազն առանձնացրել է հատկապես կոռուպցիոն հանցագործություններին վերաբերող վարույթները, քննարկվել են դրանց շրջանակում փողերի լվացման դեպքերը: Շեշտադրվել է կոռուպցիոն վարույթներին զուգահեռ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու անհրաժեշտությունը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԴԱՍԱԳՐՔԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ՀԵՂԻՆԱԿԸ՝ «ՄԱՅՐԵՆԻ»-ՈՒՄ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանն անդրադարձել է շրջանառվող տեղեկություններին, թե «Մայրենի» առարկայի 5-րդ դասարանի դասագրքում տեղ է գտել ադրբեջանցի հեղինակի պատմվածք:

Լրագրողների հետ զրույցում ԿԳՄՍ նախարարի տեղակալը նշեց, որ նախարարությունը՝ որպես կառույց, որը պատասխանատու է դասագրքերի փորձաքննությունը պատշաճ իրականացնելու համար, պետք է հետեւողական լինի, որպեսզի հեղինակները դասագրքերում չզետեղեն այն, ինչ ուզում են:

«Այս տարվա համար հայտարարված դասագրքերի փորձաքննությունը կհանձնարարվի համապատասխան կառույցներին՝ գրքերը գիտականության մասով փորձաքննելու համար»,- ասաց Սվաջյանը՝ հույս հայտնելով, որ այս տարվա ընթացքում դասագրքերի վերաբերյալ նման մասշտաբով խնդիրներ չեն արձանագրվի:

«Հեղինակներն են որոշում, թե ինչ պատմվածքներ պետք է տեղ գտնեն դասագրքերում: Հեղինակներն իրենք պետք է անձնական պատասխանատվություն կրեն եւ որոշեն, թե որ ազգի հեղինակի նյութը զետեղեն դասագրքում: Գրքերի ստեղծման գործընթացը անկախ գործընթաց է: Անցյալ տարի առաջին անգամ էր իրականացվում փորձաքննությունը: Մենք, ենթադրելով, որ ուսուցիչները դասագրքերի հետ աշխատելու ամենափորձառու խումբն են, փորձագետների հավաքագրման բաց մրցույթ էինք հայտարարել: Մեծամասամբ ուսուցիչներ էին դիմել, եւ հենց ուսուցիչներն են փորձաքննել այդ բոլոր դասագրքերը: Հաշվի առնելով, որ հիմա դասագրքերում բազմաթիվ խնդիրներ ունենք, որոնք վեր են հանվում՝ մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե փորձաքննությունը այլ կերպ կազմակերպվեր, այդ խնդիրները փորձաքննության փուլում հնարավոր է դուրս գային եւ խմբագրվեին: Դրանից ելնելով՝ մենք փոխել ենք փորձաքննության գործընթացը»,- մեկնաբանեց Սվաջյանը:

Սոցիալական ցանցերում եւ լրատվամիջոցներում օրերս տարածվել էր տեղեկություն, թե 5-րդ դասարանի «Մայրենի» առարկայի դասագրքում ներառվել է ադրբեջանցի հեղինակի ստեղծագործություն:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 1 մարդ զոհվել է, 10-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՆԵԼ ԵՆ ՕՐԱԿԱՐԳԻՑ

Երեւանի հանրային տրանսպորտի միասնական տոմսային համակարգի ներդրման նախագծում կատարված հաշվարկների հիմքում դրվել է քիչ սուբսիդավորման կամ ոլորտի ինքնածախսածածկ դառնալու գաղափարը:

Այս մասին Երեւանի ավագանու փետրվարի 13-ի նիստին ասել է քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը՝ անդրադառնալով նախագծի հիմքում ընկած որոշ հաշվարկների:

Նրա խոսքով՝ ելակետային են համարել օրական 550 հազար ուղեւորի կանխավարկածը՝ հիմք ընդունելով վերգետնյա տրանսպորտի 2014 թվականի համապատասխան ուսումնասիրություններն ու 2018-ի կետային ստուգումները, իսկ մետրոպոլիտենի դեպքում միջինացված թիվը կազմում է օրական մոտ 85 հազար:

Ըստ փոխքաղաքապետի՝ նախագծով առաջարկվող սակագինը հաշվարկվել է առանց ստվերի գործոնի՝ հաշվի առնելով, որ քաղաքապետարանը 100 տոկոս հավաքագրում է ապահովելու:

Գրիգորյանը հնչեցրել է նաեւ մեկ ուղեւորության ինքնարժեքը, որը կազմում է ավելի քան 200 դրամ:

Քննարկմանը նա ավելի վաղ նշել էր, որ համայնքային բյուջեից սուբսիդավորումը 2023 թվականին կազմել է 7 միլիարդ դրամ, որն աճի տենդենց ունի:

Անդրադառնալով ավագանու անդամների համապատասխան հարցերին՝ փոխքաղաքապետը պարզաբանել է, որ միասնական տոմսային համակարգի որոշ փաթեթներ կլինեն անվանական, եւ ուղեւորը միայն ինքն իր համար կվճարի:

Համակարգի ներդրումը ենթադրում է, որ հնարավորություն է տրվելու մեկ տոմսով օգտվել տրոլեյբուսից, ավտոբուսից եւ մետրոյից:

Ինչ վերաբերում է արտոնությունների սահմանմանը ու առաջարկվող փաթեթների սակագներին, ապա, ըստ Գրիգորյանի, արտոնյալ խմբերի եւ տրամադրվող արտոնությունների չափի, ինչպես նաեւ սակագները վերանայելու վերաբերյալ պետք է լրացուցիչ քննարկումներ լինեն:

Երեւանի քաղաքապետարանը հասարակական տրանսպորտի միասնական տոմսային համակարգի ներդրման նախագիծ էր ներկայացրել, որը ենթադրում էր տրանսպորտի սակագնի որոշակի բարձրացում: Քաղաքապետարանն այդ նախագծով առաջարկում էր ամսական (60 ուղեւորություն՝ 30 օրվա ընթացքում), եռամսյակային (180 ուղեւորություն՝ 90 օրվա ընթացքում, տարեկան (1000 ուղեւորություն՝ 365 օրվա ընթացքում) տոմսեր: Առաջարկվում էին նաեւ մեկօրյա, մեկշաբաթյա տոմսեր, ինչպես նաեւ տոմսեր, որոնք ուժի մեջ կլինեն 70 րոպե՝ երկու ուղեւորության հնարավորությամբ: Քաղաքապետարանի ներկայացրած նախագիծը լայն հանրային քննարկման թեմա դարձավ: Հաշվի առնելով հնչող քննադատություններն ու մտահոգությունները՝ Երեւանի քաղաքապետարանը որոշում կայացրեց հարցը հանել Երեւանի ավագանու՝ փետրվարի 13-ի նիստի օրակարգից:

ՎԵՐԱՆԱՅԵԼ ԵՆ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ

Երեւանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը հայտարարել է, որ հակված են հանել երթեւեկությունների սահմանափակումները միասնական տոմսային համակարգ ներդնելու նախագծից:



Սուրեն Գրիգորյանն այս մասին ասել է Երեւանի ավագանու նիստում՝ հանդես գալով հանրային տրանսպորտի միասնական տոմսային համակարգ ներդնելու նախագծի վերաբերյալ զեկույցով: «Նախագծի քննարկման շրջանակներում, բացի տոմսերի փաթեթների քանակից ու գնից, պետք է անդրադարձ կատարել նաեւ սահմանափակումների հարցին: Պետք է հակվենք այն տարբերակին, որպեսզի նախագծով առաջարկվող տոմսային փաթեթներից վերացվի սահմանափակումների հարցը, եւ ուղեւորությունների քանակն անսահմանափակ լինի»,- ասել է Գրիգորյանը:

Անդրադառնալով առաջարկված նախագծին՝ քաղաքապետի տեղակալը նշեց, որ շարունակական բարեփոխումների ենթարկվող հասարակական տրանսպորտի համակարգը կատարյալին մոտ չէ, բայց միաժամանակ չկա այն համակարգը, որի ժամանակ ձեւավորվել է գործող սակագինը, ուստի պետք է դրանց համահունչ կառուցվի նաեւ քաղաքականությունը:

Նա հավելել է, որ առկա իրավիճակը գործող սակագնային տրամաբանությամբ չի կարող շարունակվել, քանի որ գործող շարժակազմը ներդրվել է ոչ միայն համայնքային միջոցներով, եւ ոլորտը ներկայում էլ էական չափով սուբսիդավորվում է համայնքային բյուջեից:

«Ավտոբուսների, մետրոպոլիտենի եւ տրոլեյբուսների սուբսիդավորման չափը հասել է 7 միլիարդ դրամի, որը գնալով աճում է, քանի որ քաղաքն անընդհատ համալրվում է նոր շարժակազմերով»,-ասել է քաղաքապետի տեղակալը՝ հավելելով, որ այդ գործընթացը միտված է խոստմանը, որ ոչ արժանապատիվ կերպով երթեւեկությունը պետք է վերացվի:

Նրա հավաստմամբ՝ նույնիսկ առաջարկվող նախագծի ընդունման պարագայում սուբսիդավորման տրամաբանությունը կշարունակվի. «Մենք էլի տեսնում ենք, որ ոլորտը շարունակական սուբսիդավորման կարիք է ունենալու: Ուղղակի հարցն այն է, որ ամեն ինչ պետք է ունենա իր տրամաբանական սահմանները: Այսօր մեզ համար շատ լավ է, շատ ուրախալի է, որ ունենք նոր շարժակազմ, շարունակաբար այն համալրում ենք, բայց եթե չենք ուզում 10 տարի հետո կանգնել նույն կոտրված տաշտակի առաջ, որ նորից չհասկանանք, թե որտեղից պետք է գումար հայթայթենք, այլ ոլորտներից անհամաչափ կտրենք եւ ուղղենք նոր շարժակազմերի ձեռքբերմանը, ապա պետք է ունենանք նոր համակարգ»,-համոզմունք է հայտնել Գրիգորյանը:

Նրա կարծիքով՝ տրանսպորտից մշտապես օգտվողների եւ խոցելի խմբերի համար սակագինը վերանայելու դեպքում բարձրացումը պետք է նվազագույն չափով լինի:

«Հազվադեպ օգտվողների դեպքում, ում համար տրանսպորտի թանկացումը դրամատիկ փոփոխության չի բերում, օրինակ՝ զբոսաշրջիկների պարագայում, տրամաբանություն չկա, որ այդ ուղեւորափոխադրումները սուբսիդավորվեն: Այդ ուղեւորափոխադրումների հաշվին պետք է հնարավորություն ունենանք գեներացնել բյուջե, որպեսզի կարողանանք մեզ թույլ տալ տրանսպորտից հիմնականում օգտվող երեւանցիների համար այն սարքել որակյալ եւ հասանելի»,-ասել է փոխքաղաքապետը:

Թեեւ որոշում էր կայացվել տրանսպորտի միասնական տոմսային համակարգի նախագիծը հանել ավագանու նիստի օրակարգից, նիստի մեկնարկին Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ որոշում են կայացրել հարցն այնուամենայնիվ քննարկել, սակայն քվեարկությունից առաջ այն օրակարգից հանել:

Երեւանի քաղաքապետարանը հասարակական տրանսպորտի միասնական տոմսային համակարգի ներդրման նախագիծ էր ներկայացրել, որը ենթադրում էր տրանսպորտի սակագնի որոշակի բարձրացում: Քաղաքապետարանն այդ նախագծով առաջարկում էր ամսական (60 ուղեւորություն՝ 30 օրվա ընթացքում), եռամսյակային (180 ուղեւորություն՝ 90 օրվա ընթացքում, տարեկան (1000 ուղեւորություն՝ 365 օրվա ընթացքում) տոմսեր: Առաջարկվում էին նաեւ մեկօրյա, մեկշաբաթյա տոմսեր, ինչպես նաեւ տոմսեր, որոնք ուժի մեջ կլինեն 70 րոպե՝ երկու ուղեւորության հնարավորությամբ: Քաղաքապետարանի ներկայացրած նախագիծը լայն հանրային քննարկման թեմա դարձավ: Հաշվի առնելով հնչող քննադատություններն ու մտահոգությունները՝ Երեւանի քաղաքապետարանը որոշում կայացրեց հարցը հանել Երեւանի ավագանու՝ փետրվարի 13-ի նիստի օրակարգից:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

«ԿՌՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

Հայագիտական հետազոտությունների զարգացման եւ աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամը ներկայացնում է «Կռունկ Հայաստանի» հայոց լեզվի դասագրքի երրորդ հրատարակությունը: Գրքի շնորհանդեսը կկայանա փետրվարի 16-ին՝ ժամը 19:30, «Էպիգրաֆ» գրախանութում /հասցե՝ Երեւան, Մաշտոց 43/:

Մանկավարժության դոկտոր, հոգեբան Աիդա Մարկոսյանը դեռ 1990-ականներին մշակել է հայերենը որպես օտար լեզու դասավանդելու մեթոդիկա: Դրանից հետո, զարգացնելով իր մոտեցումը, այն հասցրել է հազարավոր ուսանողների՝ թարգմանելով ուսուցումն այլ լեզուներով եւ հասանելի դարձնելով այն առցանց:

Դասական դասագրքի երրորդ հրատարակությունն ամփոփում է քառորդդարյա փորձ, այն հիմնովին վերանայված աշխատանք է, չափազանց արդիական այսօր, երբ կտրուկ աճել է հայոց լեզվի ուսուցման անհրաժեշտությունը:

Դասագիրքը բաղկացած է չորս մասերից, որոնք հրատարակվել են առանձին գրքերով: Դրանցից երեքը, ըստ լեզվի իմացության եվրոպական ընդունված սանդղակի, համապատասխանում են A1 եւ A2, B1 եւ B2, C1 եւ C2 մակարդակներին:

Շնորհանդեսի օրը դասագրքի 4 հատորը կարելի է ձեռք բերել հատուկ գնով:

ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը փետրվարի 13-ին հյուրընկալել է Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության խորհրդարանական պատվիրակությանը: Հանդիպմանը մասնակցել են նաեւ ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջոն Գալագերը, Բրիտանական խմբի միջխորհրդարանական միության տնօրեն Ռիկ Նիմոն, Միջխորհրդանական Միության Բրիտանական խմբի միջազգային ծրագրերի ղեկավար Ջո Փերրին, IFES-ի հայաստանյան գրասենյակի ղեկավար Ժերոմ Լեյրոն:

Ինչպես տեղեկանում ենք ԿԸՀ-ի տարածած հաղորդագրությունից, ԿԸՀ-ի նախագահ Վահագն Հովակիմյանը, ողջունելով հյուրերին, ընդգծել է, որ ՀՀ ԿԸՀ-ն ՄԹ-ի հետ համագործակցության հարուստ փորձ ունի: Նա շնորհակալություն է հայտնել դեռեւս նախորդ տարի ստորագրված «Աջակցություն ժողովրդավարության կայացմանը Հայաստանում» (ԱԺԿՀ) ծրագրի համար:

Հյուրերը եւս կարեւորել են ՀՀ ԿԸՀ-ի հետ համագործակցությունը՝ ընդգծելով, որ կարեւորում են ազատ ու թափանցիկ ընտրությունների կայացումը, ինչպիսին իրականացնում է ՀՀ ԿԸՀ-ն:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԿԳՄՍՆ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՅՏԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2023 թ. սեպտեմբերի 8-ի N 1775-Ա/2 հրամանով հաստատված մասնագիտական խորհուրդը սահմանել է «1124. Գրահրատարակչության եւ գրադարանների ծրագրի» «1102. Թարգմանական ծրագրեր եւ աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» միջոցառմամբ 2024 թ. դրամաշնորհ ստացողների ցանկը: «Ժողովուրդ» օրաթերթին այս մասին տեղեկացրին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից:

««11002. Թարգմանական ծրագրեր եւ աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» միջոցառմամբ 2024թ. դրամաշնորհ ստացող ֆիզիկական, իրավաբանական անձանց, արտերկրի հրատարակիչների ցանկի ձեւավորման համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության պաշտոնականեւ «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կայքերում հրապարակվել էին համապատասխան հայտարարություններ: Դրանց հիման վրա ֆիզիկական անձինք՝ թարգմանիչները, հետազոտողները, ստեղծագործողները եւ արտերկրի հրատարակիչները, ներկայացրել էին դրամաշնորհի ստացման հայտեր՝համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի «2024 թ. «Թարգմանական ծրագրեր եւ աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» միջոցառմամբ դրամաշնորհ ստացողների ցանկը ձեւավորելու համար մրցույթ հայտարարելու մասին» 2023 թ. նոյեմբերի 22-ի N 2428-Ա/2 հրամանով հաստատված մրցութային կարգի:

Այս միջոցառմամբ ստեղծագործական, հետազոտական եւ թարգմանական աշխատանքների իրականացման համար դրամաշնորհի դիմած ֆիզիկական անձինք աջակցություն են ստանում ստեղծագործական, թարգմանական կամ հետազոտական աշխատանքի համար: Դրամաշնորհային աջակցությամբ ստեղծված աշխատանքների հանրային լայն հասանելիությունն ապահովելու նպատակով դրանք նաեւ հրատարակվում են:

«Հայ գրականությունը թարգմանություններում» ուղղությամբ հրատարակիչներն աջակցություն կստանան արտերկրում հայ գրականություն թարգմանաբար հրատարակելու համար:

Դրամաշնորհ տրվում է հետեւյալ մրցութային ուղղություններին համապատասխանող աշխատանքներին.

ա) Ստեղծագործական աշխատանքներ,

բ) Հետազոտական աշխատանքներ,

գ) Թարգմանական աշխատանքներ (այլ լեզուներից հայերեն),

դ) Հայ գրականությունը թարգմանություններում (հայերենից այլ լեզուներ):

Թերի տվյալներ պարունակող, մրցութային ուղղություններին չհամապատասխանող, նախկինում հրապարակված աշխատանքների համար ներկայացված հայտերը խորհուրդը չի դիտարկել:

Հետազոտական աշխատանքների գնահատման չափանիշներն են՝ հայտարարված մրցույթին համապատասխանությունը, արդիականության հիմնավորումը, փաստական նյութի հետ աշխատելու կարողությունը, մասնագիտական նորույթը:

Ստեղծագործական աշխատանքների գնահատման չափանիշներն են՝ գեղարվեստական, լեզվաոճական առանձնահատկությունները, գրական ինքնատիպությունը, թեմատիկ-բովանդակային արդիականությունը:

Թարգմանական աշխատանքների գնահատման չափանիշներն են՝ թարգմանվող երկի ընտրության հիմնավորումը, թարգմանության լեզվաոճական որակները, համարժեքությունը բնագրին:

«Հայ գրականությունը թարգմանություններում» ուղղությամբ ներկայացված հայտերի գնահատման չափանիշներն են՝ թարգմանվող գրքի գեղարվեստական արժեքը, դիմող հրատարակչության հեղինակությունը, թարգմանվող լեզվի մասսայականությունը, թարգմանչի պրոֆեսիոնալիզմը»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ հանձնաժողովի անդամները հայտերի ստացումից հետո սահմանված ժամկետում, ըստ չափորոշիչների, գնահատել են հայտերը եւ հանձնաժողովի քարտուղարին փոխանցել գնահատման թերթիկները: Մրցույթի արդյունքներն ամփոփվել են հանձնաժողովի եզրափակիչ նիստում՝ հանձնաժողովի անդամների վերջնական գնահատականների հիման վրա:

ՅՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ Է

Օլիմպիական խաղերի չեմպիոն, աշխարհի եւ Եվրոպայի բազմակի ոսկե մեդալակիրը դուրս եկավ Եվրոպայի ընթացիկ առաջնության կիսաեզրափակիչ: 97 կգ քաշում Օլիմպիական խաղերի չեմպիոնը հաջորդաբար հաղթեց Թուրքիան եւ Նիդերլանդները ներկայացնող մարզիկներին՝ համապատասխանաբար 9:1 եւ 8:3 հաշվով: Արթուր Ալեքսանյանը դուրս եկավ Եվրոպայի առաջնության կիսաեզրափակիչ:

Պայքարի մեջ են մտել նաեւ Հայաստանի հավաքականի մյուս ներկայացուցիչները:

60 կգ քաշային Գեւորգ Ղարիբյանը մեկնարկային գոտեմարտում 9:0 հաշվով հաղթեց հույն Իլիաս Զահրակիսին: 67 կգ քաշում Սլավիկ Գալստյանը հաղթանակով մեկնարկեց՝ առավելության հասնելով շվեդ Նիկլաս Օեհլենի նկատմամբ (12:4), սակայն քառորդ եզրափակչում զիջեց Ռուսլան Բիչուինին 8:0 հաշվով: Գալստյանը կշարունակի պայքարը, եթե Բիչուինը դուրս գա եզրափակիչ:

72 կգ քաշային Աշոտ Խաչատրյանը պարտություն կրեց անդրանիկ գոտեմարտում՝ զիջելով խորվաթ Դոմինիկ Էտլինգերին:

82 կգ քաշում Կարեն Խաչատրյանն առավելության հասավ խորվաթ Ֆիլիպ Ցավիչի նկատմամբ 8:6 հաշվով:

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ծանրամարտի հավաքականի անդամները սկսում են պայքարը Եվրոպայի վարկանիշային առաջնությունում: Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ընթացող ծանրամարտի Եվրոպայի առաջնության մրցումային երկրորդ օրը Հայաստանի կանանց հավաքականն ունի երկու ներկայացուցիչ: 55 կգ քաշային կարգում կմրցեն Իզաբելլա Յայլյանը եւ Ալեքսանդրա Գրիգորյանը: Նախորդ տարի Երեւանում կայացած Եվրոպայի առաջնությունում Իզաբելլա Յայլյանը դարձել էր ԵԱ-ի բրոնզե մեդալակիր: Ալեքսանդրա Գրիգորյանը միայն 6-րդն էր: «Արմենպրես»-ը Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայից կլուսաբանի ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը:

ՀԱՂԹԵՑ 2:1 ՀԱՇՎՈՎ

Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի անդամ Մալխաս Ամոյանը դուրս եկավ Եվրոպայի առաջնության եզրափակիչ:

Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում ընթացող Եվրոպայի առաջնության 77 կգ քաշային կարգի կիսաեզրափակչում Մալխաս Ամոյանը մրցեց Մոլդովայից Ալեքսանդրին Գուտուի հետ: Ամոյանը հաղթեց 2:1 հաշվով եւ դուրս եկավ եզրափակիչ:

Ամոյանի մրցակիցը եզրափակչում կլինի թուրք Էմրե Բասարը:

55 կգ քաշային կարգի կիսաեզրափակչում Հայաստանի հավաքականի անդամ Մանվել Խաչատրյանը մրցեց Մոլդովան ներկայացնող Արտյոմ Դոլինուի հետ: Գոտեմարտն ավարտվեց 2:2, ու քանի որ վերջին միավորը վաստակել էր մոլդով մարզիկը, հենց ինքն էլ դուրս եկավ եզրափակիչ: Մանվել Խաչատրյանը կպայքարի Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալի համար: Գոտեմարտը կկայանա փետրվարի 13-ին:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵԿԱՄՈՒՏ	60.525.796 (Վաթսուն միլիոն հինգ հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ
այդ թվում՝	
թերթեր	5.074.640 (հինգ միլիոն յոթանասունչորս հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ
գովազդ	55.451.156 (հիսունհինգ միլիոն չորս հարյուր հիսունմեկ հազար մեկ հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ
ԾԱԽՍԵՐ	
այդ թվում՝	
Տպագրական ծախսեր	6.537.550 (վեց միլիոն հինգ հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ
Աշխատավարձ	35.021.116 (երեսունհինգ միլիոն քսանմեկ հազար մեկ հարյուր տասնվեց) ՀՀ դրամ
Այլ ծախսեր	4.676.421 (չորս միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ
ՀԱՐԿԵՐ	
Եկամտահարկ	6.242.551 (վեց միլիոն երկու հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ
Շրջ. հարկ	2.848.674 (երկու միլիոն ութ հարյուր քառասունութ հազար վեց հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ
Սոց. վճար	1.312.194 (մեկ միլիոն երեք հարյուր տասներկու հազար մեկ հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ
Դրոշմանիշային վճար	508.500 (հինգ հարյուր ութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ

● *Մարտի 3-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա հոբելյանական համերգ՝նվիրված Արամ Ասատրյանի հիշատակին: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ փոխել սոցիալական փաթեթի իմ հաշիվը: Խնդրում եմ ներկայացնել մանրամասն:

Գրիգոր Ջալիբեկյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ յուրաքանչյուր բյուջետային տարվա սոցիալական փաթեթի գումարների փոխանցման համար լրացվում է նոր դիմում: Սոցփաթեթի հաշիվը կարելի է փոխել միայն նոր բյուջետային տարում՝ նախքան սոցիալական փաթեթի ընթացիկ տարվա առաջին գումարի փոխանցումը: Այս դեպքում աշխատողը դիմումի հետ միասին ներկայացնում է նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք, ինչպես նաեւ սոցփաթեթի նախկին հաշիվը սպասարկող բանկից տեղեկանք՝ պարտավորություններ չունենալու վերաբերյալ: Սոցփաթեթի հաշիվը փոխելու դեպքում աշխատողն իր հաշվի դրամական միջոցները սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկից սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկ փոխանցելու համար նախկին բանկ է ներկայացնում նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք: Այդ տեղեկանքի հիման վրա սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկն աշխատողի սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները փոխանցում է սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկի սոցփաթեթի հաշվին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները հնարավոր է կանխիկացնել կամ փոխանցել ցանկացած ուղղություններով միայն աշխատողի կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու եւ սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման ժամանակ (երբ դադարում է նրա՝ սոցիալական փաթեթ ստանալու իրավունքը, եւ նրա սոցփաթեթի հաշվին առնվազն երեք ամիս սոցիալական փաթեթի գումարների փոխանցումներ չեն կատարվել) կամ աշխատողի մահվան դեպքում ժառանգի կողմից սոցփաթեթի հաշվում առկա միջոցներն օրենքին համապատասխան ժառանգաբար նրան անցնելու դեպքում:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Կարելի՞ է արդյոք արտոնագիր վերցնել կոնկրետ օրերի համար, թե՞ ոչ:

Հասմիկ Կետիկյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հավելվածի դրույթների 12-րդ կետի համաձայն՝ անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց կողմից բացառապես հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված, Երեւան քաղաքում եւ մարզկենտրոններում՝ 300 մ2 եւ ավելի, այլ քաղաքներում եւ այլ վայրերում՝ 200 մ2 եւ ավելի, սահմանամերձ գյուղերում 100 մ2 եւ ավելի մակերես ունեցող սրահներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու դեպքում կարող է տրամադրվել արտոնագիր որեւէ ամսվա օրվա կամ օրերի համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ «Արտոնագրային վճարների մասին» օրենքի համաձայն՝ յուրաքանչյուր գործունեության տեսակի մասով յուրաքանչյուր ժամանակահատվածի եւ յուրաքանչյուր գործունեության իրականացման վայրի համար տրվում է առանձին արտոնագիր:

Ի դեպ, ընթացիկ տարում արտոնագրային վճար վճարող հանդիսանալուց դադարելու, գործունեությունը դադարեցնելու կամ ժամանակավոր կասեցնելու դեպքերում վճարված արտոնագրային վճարները չեն հաշվանցվում եւ չեն վերադարձվում՝ անկախ այն բանից, թե որ ժամանակահատվածի համար է վճարվել արտոնագրային վճարը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Գերմանիայում 80-ամյա թոշակառուն, փորփրելով աղբանոցները եւ կենցաղի վրա նվազագույն ծախսեր անելով, կարողացել է խնայել 700 հազար եվրո, գնել 10 տուն, ապա դրանք վարձով տալ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 1 - 5	+ 5 + 10
Կոտայքի լեռներ	- 1 - 4	+ 5 + 9
Կոտայքի նախալեռներ	0 + 2	+10 + 12
Գեղարքունիք	- 4 + 1	+ 5 + 10
Լոռի	+ 2 + 6	+13 + 18
Տավուշ	+ 4 + 8	+19 + 22
Արագածոտնի լեռներ	- 2 - 5	+ 5 + 9
Արագածոտնի նախալեռներ	0 + 2	+10 + 15
Արարատ	- 1 + 4	+14 + 17
Արմավիր	- 2 + 1	+14 + 16
Վայոց ձորի լեռներ	- 2 - 5	+ 5 + 8
Վայոց ձորի նախալեռներ	0 + 3	+14 + 17
Սյունիքի հովիտներ	+ 7 + 10	+21 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 4	+14 + 18
ԼՂՀ	+ 2 + 4	+13 + 17
Երեւան	+ 8 + 10	+13 + 15

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.2.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*